ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<< >> հունիսի 2010թ. N- Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՄԲ ՀՐԱՊԱՐԱԿ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի դրույթները, հաշվի առնելով Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտորի միջնորդությունը և Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Շարիմանյան և Հերացու փողոցների հատման մասում ձևավորված հրապարակն անվանակոչել բժշկապետ Մխիթար Հերացու անվամբ՝ <<Մխիթար Հերացու անվան հրապարակ>>:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՄԲ ՀՐԱՊԱՐԱԿ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետարան է դիմել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտորը և հայտնելով, որ 2009թ. մայիսի 26-ին տեղի է ունեցել Շարիմանյան և Հերացու փողոցների հատման մասում կառուցված հրապարակի բացումը, խնդրել է հրապարակն անվանել Մխիթար Հերացու անվամբ, քանի որ այն գտնվում է Հերացու փողոցի վրա, և մեծ բժշկապետի անվամբ հրապարակը հարիր է Երևան քաղաքին:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտորի միջնորդությունը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՄԲ ՀՐԱՊԱՐԱԿ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան քաղաքում Մխիթար Հերացու անվամբ հրապարակ անվանակոչելու մասին>> որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ